

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների
հանրային խորհրդի 2019թ. հոկտեմբերի 30-ի նիստի

ք. Երևան

սկիզբ՝ 30 հոկտեմբերի 2019թ., ժ. 11:05
ավարտ՝ ժ. 12:15

Մասնակցում էին՝ խորհրդի 11 անդամներից 9-ը:

Բացակայում էին՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ ժ. Անդրեասյանը և ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Մ. Սարգսյանը, իսկ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (ՀՀ ՊԵԿ) նախագահի տեղակալ Մ. Փաշայանի փոխարեն մասնակցում էր ՀՀ ՊԵԿ Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ Ա.Մուրադյանը, իսկ Ֆինանսների նախարարության Մակրոտնտեսական քաղաքականության վարչության պետ Է. Հակոբյանի փոխարեն՝ Գ. Ադամյանը:

Հրավիրված էին՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատի) նախագահի տեղակալ Գ. Անանյանը, Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը:

Նիստի արձանագրություն **վարում էր** Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի (Հանրային խորհուրդ) քարտուղար, Արմստատի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի գլխավոր մասնագետ Գ. Նշանյանը:

Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. «2020 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծին հավանություն տալու հարցը
2. Այլ հարցեր:

Բացման խոսքով հանդես եկավ Հանրային խորհրդի նախագահ պարոն Ա. Անանյանը:

Քվեարկության դրվեց նիստի օրակարգը:

Հանրային խորհրդի 9 անդամների կողմ քվեարկության արդյունքում այն **հաստատվեց**:

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ՝ համաձայն օրակարգի, Արմստատի նախագահ պարոն Ս. Մնացականյանը **ներկայացրեց** «2020 թվականի վիճակագրական ծրագրի» (Ծրագրի) նախագիծը՝ համեմատելով «2019 թվականի վիճակագրական ծրագրի» հետ:

Պարոն Մնացականյանն իր ելույթում ներկայացրեց նաև դիտողություններ և առաջարկություններ ստանալու ակնկալիքով դեռևս ս. թ. հունիսի 10-ից Արմստատի

պաշտոնական կայքում զետեղված և գրությամբ 133 հիմնական վիճակագրական տեղեկատվություն օգտագործողներին կարծիքի ներկայացված և նրանց կողմից դիտողությունների և առաջարկությունների ընդունման կամ չընդունման հիմնավորմամբ Արմատատի կողմից կազմված ամփոփաթեթը, ինչպես նաև պատասխան-գրությունների վիճակագրությունը, առաջարկությունների ընդունման կամ չընդունման, հարցադրումների վերաբերյալ պարզաբանումները և այլն:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ՝ Հանրային խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն **որոշեց** հավանություն տալ «2020 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծին:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ՝ «Այլ հարցերի» շրջանակում քննարկումներ եղան գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման գների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության հավաքման ու հրապարակման, գյուղատնտեսական տեխնիկայի առկայության վերաբերյալ տեղեկատվության հրապարակման, հիմնական միջոցների ակտիվ մասի վերագնահատման և քաղաքների կտրվածքով բնակչության հիվանդացության վերաբերյալ տվյալների տարածման մասին:

Հարցերին պատասխանեց Արմատատի նախագահ պարոն Ս. Մնացականյանը, մասնավորապես հստակեցնելով հետևյալը.

- ✓ Արմատատը վարում է գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման և գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գների դիտարկումներ այդ երկու ցուցանիշների գծով ինդեքսների հաշվարկման նպատակով, իսկ գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման գները վիճակագրական նպատակ չեն հանդիսանում՝ ըստ գների վիճակագրության միջազգային ձեռնարկների, քանզի արդյունաբերական արտադրանք արտադրողների գների ինդեքսի հաշվարկման ժամանակ այդպիսի գների մեջ արդյունաբերողները ներառում են ոչ միայն գյուղատնտեսական արտադրանքների, այլև ոչ գյուղատնտեսական արտադրանքների վերամշակման նպատակով ձեռք բերված հումքանյութեր, կիսաֆաբրիկատներ և այլն: Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման գները զուտ վիճակագրական միկրոտնտեսական խնդիրներին են միտված, հետևաբար, հարկ է որևէ հետազոտական կազմակերպությունների կողմից ֆոկուս հետազոտության իրականացում:
- ✓ գյուղատնտեսական տեխնիկայի առկայության վերաբերյալ տեղեկատվության հրապարակման առնչությամբ նշվեց, որ տեղեկատվության աղբյուրը նախկին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունից փոխանցվել է ՀՀ ոստիկանությանը: Վերջինիս կողմից տեղեկացվել է, որ այդ տեխնիկային պետհամարանիշեր տրամադրելու և հաշվառման գործընթացները դեռևս ավարտված չեն և կպահանջվի որոշակի ժամանակահատված:
- ✓ հիմնական միջոցների ակտիվ մասի վերագնահատման վերաբերյալ հարցի քննարկման ժամանակ նշվեց, որ դա վիճակագրական գործառույթներից դուրս է և դրա լիազոր մարմինը ՀՀ ֆինանսների նախարարությունն է:

30.10.2019թ.

- Միաժամանակ, ընդգծեց ինտեգրված (միասնական) պետական վարչական տեղեկատվական համակարգի գործարկման կարևորությունը: Ի լրումն վերոնշյալի, նա հավելեց, որ ՄԱԿ-ի կառույցները պատրաստակամություն են հայտնել օժանդակելու վարչական ռեգիստրների ինտեգրված (միասնական) պետական վարչական տեղեկատվական համակարգի ձևավորման հարցում,
- ✓ քաղաքների կտրվածքով բնակչության հիվանդացության վերաբերյալ տվյալներ ստանալու հարցի վերաբերյալ նշվեց, որ դրա տեղեկատվական աղբյուրն Առողջապահության նախարարությունն է, իսկ Արմատատի կողմից տեղեկատվության դեգադրեցացման մակարդակը համապատասխանում է սահմանված միջազգային սպահանջներին և ստանդարտներին ու հարապարակվում է ըստ հանրապետության և ՀՀ մարզերի ու Երևան քաղաքի կտրվածքով:


Ելույթի վերջում պարոն Ս.Մնացականյանը հավելեց, որ ք. Ժնևում անցկացված ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի (ԵՎԿ) Բյուրոյի նիստում ինքն առաջարկել է, որ Բյուրոյի նիստերից որևիցե մեկն անց կացնել Երևանում, ուստի, եթե նման որոշում ընդունվի, ապա Հանրային խորհրդի անդամների ցանկությամբ, հնարավոր է հանդիպում կազմակերպել նաև վերոհիշյալ Բյուրոյի անդամների հետ:

Նիստի եզրափակման խոսքով հանդես եկավ Հանրային խորհրդի նախագահ պարոն Ա. Անանյանը, նշելով, որ ցանկալի է Արմատատում մասնագիտական հանդիպումներ կազմակերպել Արմատատի մասնագետների և գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչների հետ:

Պարոն Ս. Մնացականյանը նշեց, որ թեմատիկ քննարկում անցկացնելու նպատակով, «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքով ամրագրված տարվա ընթացքում առնվազն երկու անգամ Հանրային խորհրդի նիստ անցկացնելուց զատ, կարելի է նախապես Հանրային խորհրդի նախագահին դիմելով հրավիրել Հանրային խորհրդի նիստ:

30.10.2019թ.

Հանրային խորհրդի
նախագահ՝



Ա. Անանյան

Հանրային խորհրդի
քարտուղար՝



Գ. Նշանյան